# Պարզաբանում

№176/GArm/25_4.3_072-082/10.06.25 ծածկագրով մրցակցային ընտրության փաստաթղթերի վերաբերյալ

**Հարցադրում՝**

Հարգելի №176/GArm/25_4.3_072-082/10.06.25 ծածկագրով մրցակցային ընտրության հանձնաժողով.

Հավելված 4.1-1-ում նշված տեխնիկական պահանջները ГОСТ 20295-85-ին չեն համապատասխանում: Դրանց համապատասխանելու համար անհրաժեշտ է խողովակները արտադրել ըստ ТУ 1381-012-05757848-2015-ի, որը հատուկ մշակվել է «Գազպրոմի» համար համաձայն որի

1. Խողովակների քիմիական բաղադրությունը պետք է համապատասխանի ТУ 14-1-1950-2004-ի պահանջներին:
2. Խողովակի երկարությունը պետք է լինի 10-ից 12մ;
3. Հիմնական մետաղի և եռակցված միացման հարվածային դիմադրության (ударная вязкость) KCV-ն -5 °C ջերմաստիճանում կազմում է ոչ պակաս, քան 40Ջ/սմ2:
4. Հիմնական մետաղի և եռակցված միացման հարվածային դիմադրության (ударная вязкость) KCU-ն -40 °C ջերմաստիճանում կազմում է ոչ պակաս, քան 40Ջ/սմ2:
5. Հարվածային դիմադրությունը (ударная вязкость) որոշվում է որպես երեք նմուշների փորձարկման արդյունքների թվաբանական միջին. մեկ նմուշի համար թույլատրվում է հարվածային դիմադրության 9.8Ջ/սմ2 նվազում:
6. Եռակցված միացումը փորձարկելիս հարվածային նմուշների վրա միաձուլման գծի և կարի կենտրոնի երկայնքով կատարվում է կտրվածք:

Խնդրում ենք տալ պարզաբանում:

**Պարզաբանում**

Համապատասխան հավելվածում նշված պահանջները չեն հակասում ГОСТ 20295-85-ին, այլ հանդիսանում են լրացում՝ համաձայն «Գազպրոմ» ՀԲԸ-ի կողմից խողովակներին առաջադրվող տեխնիկական պահանջների:

Մրցակցային ընտրության գնահատող հանձնաժողով.